

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուդովիկոս ԺԶին վարքն ու մահը :
(Տես երես 20)

Իրիկուան Թագաւորը խնդրեց իր պահապաններուն գլխաւորներէն՝ որ Հասարակաց Խորհրդարանին հարցընեն, թէ ինչ պատճառաւ չէին թողուր որ իր փաստաբանները աշտարակը գան . վասն զի կը փախաքէր գոնեա՞ Պ . Սալէրպին հետ խօսիլ : Ինոնք ալ խոստացան որ աս բանս կատարեն . բայց անոնցմէ մէկը յիշեցուց , որ արգելեալ էր իրենց Լուդովիկոս ԺԶին վրայօք ընդհանրական ժողովքին ներկայանալ , առանց իրմէ աղերսագիր մը կամ գրուածք մը ունենալու՝ իրեն ստորագրութեամբ վաւերացած : « Ինչո՞ւ համար չէք իմացըներ ուրեմն ինձի աս եղած նոր փոփոխութիւնս , , , ըսաւ Թագաւորը . մէկէն ան ատեն տոմսակ մը գրեց և իրենց տուաւ , զոր երկրորդօրը Հասարակաց Խորհրդարանին ներկայացուցին : Թագաւորը ասոր մէջ կը խնդրէր որ ազատ կերպով իր փաստաբաններուն հետ կարենայ տեսնուիլ ու խօսիլ , և կը գանգատէր իր քովը առտու իրիկուն պահապան կենալուն վրայ . « Կրնաք երեւակայել , կ'ըսէր իր գրուածքին մէջ , թէ ինչ ծանր բան է ինձի համար մինակ մնալս իմին ասանկ հանգամանացս մէջ , առանց հարկաւոր եղած սրտի հանգստութիւնն ունենալու ես իմ վրաս մտածելու համար , , :

Կիրակի օրը , յունուարի 20^ն , երբոր անկողնէն ելաւ Թագաւորը , հարցուց թէ արդեօք ներկայացուցէր էին իր խնդիրըը Հասարակաց Խորհրդարանին , և իմացաւ որ մէկէն տարեր էին : Տասնին ատենները Թագաւորին խուցը մտայ , որն որ ըսաւ ինձի . « Ինչո՞ւ չըգար Պ . Տը Սալէրպը , , — « Տէր իմ , պատասխանեցի ես իրեն , լսեցի որ շատ անգամ աշտարակին դուռ եկեր է , բայց չեն թողուցած որ ներս մտնէ , , — « Ի՞նչ ալ պատճառը կ'իմանամ , ը-

սաւ Թագաւորը . անշուշտ Խորհրդարանը իմ նամակիս վրայօք որոշմունք մը ըրած պիտի ըլլայ , , : Ետքը սկսաւ խցին մէջ քալել , և բոլոր առաւօտը կարդալով ու գրելով անցուց :

Սամը երկու զարկած էր , երբոր յանկարծ դուռը բացուեցաւ ու ներս մտան Խորհրդարանին անձինքը . ասոնք տատուերկուքէն տասնըհինգ հոգի մը կային , որոնց մէջն էր նաև Կարա՝ արդարութեան պաշտօնեայն , Լը-Պրիւն՝ արտաքին գործոց պաշտօնեայն , Կրուվէլ Խորհրդարանին ատենադպիրը , գահերէցը , և ընդհանրական գործակալը , քաղաքական ներքին գործոց քաղաքապետը , և այլն : Սանդէու , որ ասոնց առջևէն կու գար , ըսաւ ինձի՝ թէ « Իմացուր որ Պործադիր Խորհրդարանին անձինքը կու գան , , : Թագաւորը լսելով ասոնց ձայնը , ոտքի վըրայ ելլելով քանի մը քայլ առաջ եկեր էր . բայց երբոր ասոնց բազմութիւնը տեսաւ , իր խցին և նախասենեկին դրան մէջտեղը կեցաւ՝ ծանր և վսեմ կերպով մը , որուն քովը կեցայ ես ալ : Կարա , գլխարկը գլուխը , ասանկ սկըսաւ ըսել . « Լուդովիկոս , Բագային ժողովքը հրամայեց մեզի , որ իր յունուարի 15 , 16 , 17 , 19 , 20 օրերուն տուած հրովարտակները կարդանք քեզի , և ահա Պործադիր Խորհրդարանին ատենադպիրը զանոնք պիտի կարդայ , , : Ինչ ատեն Կրուվէլ բացաւ իր ձեռքի թուղթը և գողգոջուն ձայնով ժը սկսաւ կարդալ :

Ազգային Ժողովքին յունուարի 15 , 16 , 17 , 19 և 20 օրերուն տուած հրովարտակները :

ՅՕԴՈՒԱՄ Ա

Ազգային Ժողովքը յանցաւոր կը դատէ զԼուդովիկոս Վաբեդ Վաղդիացոց վերջին թագաւորն , իբրու դաւաճան Ազգային ազատութեան և Հասարակաց անդորրութեան :

ՅՕԴՈՒԱՄ Բ

Ազգային Ժողովքը կը վճռէ որ Լուդովիկոս Վաբեդը սպաննուի :

ՅՕԴՈՒԱԾ Գ

Ազգային ժողովքը Լուգովիկոսի բողոքը, զորն որ իր փաստաբաններուն ձեռքովը ներկայացուց ատենին՝ ընդ անուամբ Բոդր աս Ազգե ընդդէմ դատակնքոյն տուելոյ փասն Լուգովիկոսայ 'ի Գաշնակից ժողովոյն, անգոր և չեղածի պէս կը սեպէ. և կ'արգելու որ ոչ ոք իր կողմը բռնէ. և թէ որ մէկը համարձակի աս բանս ընելու, դատաստանի տակ իյնալով պիտի պատժուի իբրեւյանցաւոր Հասարակապետութեան բարոյն ու հաստատութեանը դէմ ըրած:

ՅՕԴՈՒԱԾ Դ

Առժամանակեայ Գործադիր ժողովքը ինչուան աս օրս չլմնցած պարտական է ծանուցանելու, Ազգային ժողովքին աս որոշմունքը, Լուգովիկոս Գաբեղին. իսկ իրեն իմացընելէն ետքը քսանըջորս ժամուան միջոցին մէջ վճիռը պիտի գործադրուի, ամենայն կարևոր զգուշութիւններն ընելով որ հրամանը ապահովապէս առաջ երթայ. աս հրամաններս իրեն իմացընելէն ետքը՝ մէկէն նոյնը պիտի ծանուցուի Գաշնակից ժողովոյն:

Եւս բաներս կարգալու միջոց թագաւորին վրայ բնաւ այլայլութիւն մը չտեսնուեցաւ. միայն երբոր առաջին յօդուածոյն մէջ Գաշնակի բառը եկաւ, դժուարելու կերպով մը ժպտեցաւ: Իսկ երբոր Գաշնակի բառը լսեց, երեսին վրայ երկնային զուարթ կերպ մը տեսնուեցաւ, և աչքերը չորս կողմի եղող ներուն վրայ դարձուց, իմացընել ուզելով թէ մահը անմեղի մը համար վախնալու բան չէր: Այլ ըրջը թագաւորը

1 Յուշընելու համար թէ ինչ աստիճանի քրիստոնէական առաքինութեան ոգւով լսեց Լուգովիկոս իր մահուան դատակնքոյն վճիռը, հարկաւոր կը սեպեմ հոս մէջ բերել Հէպերի մէկ վերայութիւնը աս բանիս նկատմամբ, որն որ անօրէնութեան կողմանէ Բոսպորէի ինստիտուտին էր, անաստուածութեան գլխաւոր առաջնորդներէն մէկը, և ռեբրիմ թշնամի թագաւորին. ու ինքիւրմէ փափաքէր էր ներկայ գտնուիլ աս աղէկէզ Հանգիսին, ինչպէս ինքն ալ կը վկայէ:

“Ուզեցի ներկայ գտնուիլ Լուգովիկոսի մահուան վճիռը իրեն կարգացած ատենին, որն որ կատարեց Կարա. առանց թեթեւ այլայլութիւն մ'ալ ցուցընելու լսեց վճիռը: Երբոր կարգալը լմնցաւ, հրաման խնդրեց որ կարենայ տեսնել

դէպ 'ի Կրուվէլ ատենադպրին մօտենալով, անոր ձեռքէն առաւ դատակնքի քը, ծալեց, ու գրապանակին՝ մէջը գրաւ. յետոյ անկից թուղթ մը հանելով՝ Կարայի տուաւ ու ըսաւ. “Պարոն, դու որ պաշտօնեայ արդարութեան, կ'աղաչեմ որ աս նամակս ազգային Գաշնակից ժողովոյն տաս առանց ատեն անցընելու”: Բայց կարծելով որ անիկայ կը քաշուի առնելու, վրայ բերաւ ըսելով. “Եւս կը կարդամ զայն ձեր առջեւ”: և առանց ամենեւին այլայլելու կարգաց աս աղաչանաց գրուածքը, որ հոս կը դնեմ:

Կը խնդրեմ որ երեք օր ինձի ժամանակ տրուի, որպէս զի կարենամ Աստուծոյ դիմաց ելլելու համար ինքզինքս պատրաստել. ուստի կ'աղաչեմ ինձի թոյլ տրուի որ ազատութեամբ վարուիմ այն անձին հետ, զոր ուզեմ Հասարակաց խորհրդարանին պաշտօնէիցմէ. և թէ այն անձը ամենեւին վախի ու վտանգի մէջ չիյնայ ինձի ըրած աս բարերարութեանը համար:

Կը խնդրեմ որ զիչոր ցորեկ քովս կեցող պահապաններուն հսկողութենէն ազատ ըլլամ, զոր ժողովքը սահմանեց քանի մը օրէ 'ի վեր:

Կը խնդրեմ որ աս՝ միջոցիս մէջ կարենամ տեսնել իմ ընտանիքս, բայց առանց ուրիշի ներկայութեան. կը փափաքէի դարձեալ որ ժողովքը առանց ուշացընելու որոշէր իմ ընտանեացս վիճակն ալ, և թողուր որ երթան ազատութեամբ հոն՝ ուր որ ժողովքը աւելի պատշաճ սեպէ:

Կը յանձնեմ Ազգին բարեգթութեանը

իր ընտանիքը, քահանայ մը ուզեց, և ուրիշ այն ամէն բաները՝ որ իրեն մտիթարութիւն կրնային ըլլալ այն վերջի վայրկեաններուն: Իրեն կերպը անանկ ազնուական ու վսեմէր, իրեն խօսակցութիւնը անանկ խելքով ու ամէն մէկ խօսքը չափով ու կշռով, որ չուզելովս հանդերձ աչքերս տրցունքով լեցուեցան: Իրեն նայուածքն ու ընդհանուր շարժուածքը անանկ խելքէ մաքէ վեր բան մըն էր, որ գուրս ելայ ես իմ վրաս զայրացած ու կատաղութեամբ լեցուած և միտքս գնելով որ ամէն բանէ ձեռքս քաշեմ ալ անկէ ետքը: ”

Որ և իցէ մարդու վկայութենէ վեր սեպեցի Հէպերի աս վկայութիւնը, որովհետեւ Լուգովիկոսի համար աւելի պատուաւոր և ուրիշներուն առջեւ ալ աւելի հաւատարիմ կրնան ըլլալ աս խօսքերս:

Ծանօթութիւն Հեղինակին:

1 ՏՃ. ՃԵՂԵՄԻ:

ինձի ծառայող ամէն անձինքը . որոնցմէ չտար իրենց թոշակէն զատ ուրիշ բան մը չունէին , անանկ որ եթէ ան պակսելու ըլլայ , խեղճութեան մէջ պիտի խնան . աս անձանց մէջ կան նաև ծերեր , կանայք , տղայք , որ ուտելու հաց ալ չունին :

Գրեալ յԱշտարակի Տաճարին .

20 յունուար 1793 :

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ

Կարա թագաւորին նամակն առաւ , և տպահովցուց զինքը որ ժողովքին կը տանէր մէկէն : Երբոր դուրս ելլելու վրայ էին , թագաւորը նորէն ձեռքը ծոցը խոթեց , ու գրապանակը հանելով՝ ըսաւ . « Պարոն , թէ որ ժողովքը իմ ուզած անձս ինձի շնորհէ , ահաւս սիկ իր կեցած տեղւոյն հասցէն » : Եւ ըսելով՝ տուաւ զայն քովի պահապաններէն մէկուն . հասցէն , զոր ինքը իր ձեռքովը գրած չէր , ասանկ էր . Ա . Պ . ԷճՋօրաք Խը Ֆիբրէնդ . Ռի- Խը Պափ , Լի- 483 : Թագաւորը ետև քաջուեցաւ , և պաշտօնեայն ալ իր ընկերներովը գնաց :

Կը շարունակուի :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Մոնղէ Պիանգոյ կամ Սպիտակ Լեռ :

Եւրոպայի մէջ բնութեան ճարտարապետած ահաւոր ու սկայածև հրաշալիքներէն գլխաւորն է Խաւրիոյ Սոնդէ Պիանգոյ կամ Սպիտակ Լեռ , որուն գագաթը 'ի բոլոր Եւրոպա բարձրագոյնն է , և որուն քով ուրիշ լեռները բլուր կ'երևան : Եւ հսկային հասակը 14,806 ոտք բարձրութիւն ունի ծովուն երեսէն , և 68 փարսախ հեռուէն աչքի կը տեսնուի . Գօսինեի գաւառին մէջ կ'իյնայ , Օուիցերիոյ ու Սաւոյայ սահմաններուն վրայ , ընդ մէջ Լ'նդրեւ և Շամունի դաշտերուն : Եւսյետին դաշտը , որ 5 փարսախ երկայն է ու հազիւ կէս փարսախ լայն , և ծովուն երեսէն 3,174 ոտք բարձր , ինչուան

անցեալ դարուն մէջ տեղուանքը անծանօթ մնացած էր . Բողօք և Ուինտհամ ճանապարհորդները գտան զասիկայ , ու անկէ ետքը՝ լեռը տեսնելու գացողները ասկից կ'անցնին : 1,600 բնակիչ կ'ապրին հոնտեղ՝ հետաքնին ճանապարհորդաց դադարելովը , և համեղ մեղր մը ծախելով , որ զարմանալի բան մըն է այնպիսի սառնապատ ու բքաբեր տեղեաց մէջ :

Սառնամանեաց դաշտի մէջէն կ'երկրնայ դէպ 'ի վեր Սոնդէ Պիանգոյ ու իր գլուխը ամպերուն կը հասցնէ : Եւս սառուցեալ կատարները քսանի մը չափ կան , որոնցմէ ոմանք 5 կամ 6 փարսախ երկայն են և կ'իջնան դալարագեղ ու զուարթատեսիլ ձորերու ինչուան խորերը , և զովութիւն կու տան անոնց : Եւնք հեռաւոր նշաններն են Սպիտակ Լեռան , որ այլ և այլ նկարակերտ ու իրարու հակառակ հաճոյական տեսարաններ կրներկայացնէ մարդուս աչքին առջև , ըստ զանազան կողմանց որ դիտուի : Հիւսիսային կողմէն նայելով՝ բուրգի մը պէս կ'ամբառնայ , որուն վեհութիւնը աննման է : Հարաւային արևմտեան ու հիւսիսային արևմտեան կողմերէն՝ ստորոտէն ինչուան գլուխը կարգ կարգ բոլորածև գագաթներով կը բարձրանայ : Եւք հակառակն՝ իր հարաւային երեսը , որն որ 10,000 ոտք բարձրութիւն ունի , այնպիսի ուղղահայեաց դիրքով վերէն վար կտրուած է , որ սառն ու ձիւնը ամենւին չեն կրնար վրան հանգչիլ , և իր կրանիտեայ սեպացեալ ու լեռի կողերը կ'երեւցնէ : Բլմտեան կողմը՝ տեսարանը բոլորովին տարբեր է . ասպռաժը , որ 11,000 ոտք բարձրութեան աւելի է , թեթև զառիվայրով մը վար ինջած է , անանկ որ բոլոր այս երկայնութեանը վրայ կարծես թէ անհատնում գորգ մը պատած է սառնամանեաց ու ձեան , որուն միապաղաղ սպիտակութիւնը աչք կ'առնէ : Կագաթը հիւսիսային արևելեան կողմէն նայելով՝ հասարակ ուղտի կամ տաճիկ ուղտի սապատին կը նմանի . անանկ որ ժողո-